ՊԱՏՄԱԿԱՆ ԴՎԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԿՐԿԻՆ ՂՈՂԱՆՋԵՑԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՆԳԵՐԸ

ՕԾՎԵՑ ԴՎԻՆԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 3 մայիսի 2000 թ.:

Այսօր, առավոտյան, Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգևոր դասի ուղեկցությամբ մեկնեց Արարատի մարզ՝ օծելու Ներքին Դվինի Ս. Հարություն նորակառույց եկեղեցին:

Պատմական Դվին կաթողիկոսանիստ մայրաքաղաքում Հայոց Հայրապետին դիմավորեցին աղ ու հացով, եկեղեցու զանգերի ղողանջներով ու «Հրաշափառի» երգեցողությամբ: Այստեղ էին Արարատի մարզպետ Հովիկ Աբրահամյանը, եկեղեցու բարերար, նախկին դվինցի Սամվել Տիգրանյանը, մարզային իշխանության ներկայացուցիչներ, բազմաթիվ դվինցիներ:

Ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի օծվել էին եկեղեցու սյուները, մկրտության ավազանը: Հայոց Կաթողիկոսը սրբալույս Մյուռոնով օծեց եկեղեցու Ս. Սեղանն ու խորանը:

«Հավատում ենք, որ ազգի, հայրենիքի, մեր ժողովրդի հարատևությունը, նրա բարօր կյանքը, լուսավոր գալիքը պայմանավորված են մեր անսասան հավատքով՝ հանդեպ մեր հայրերի սրբազան ժառանգությունները, հանդեպ Քրիստոսի Ս. Ավետարանը, Նրա լույս վարդապետությունը»,- ասաց Նորին Սրբությունը՝ հորդորելով հասու լինել այդ ճշմարտությանը, որը և ժողովրդի գոյության ու հարատևության հիմքն է:

Ապա նորակառույց Ս. Հարություն եկեղեցում մատուցվեց առաջին Ս. Պատարագը: Պատարագիչն էր Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը: Կատարվեց նաև հոգեհանգստյան արարողություն՝ հին և նոր հանգուցյալների և բարերարի ննջեցյալ հոր հիշատակին:

Հավարտ Ս. Պատարագի եկեղեցու բակում տեղի ունեցավ ժողովրդական տոնախմբություն: